



6/04. 2/9319-2020

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 366 - Ա

«16» 03 2020թ.

ք.Երևան

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Հիմք՝ ԱԻ նախարարի մամուլի քարտուղար Է. Զարգարյանի միջնորդագիրը:

16.03.2020

X

ՖԵԼԻՔՍ ՏՈԼԱԿՅԱՆ

Подписано: TSOLAKYAN FELIKS 3701520046

Ֆ. ՏՈԼԱԿՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

Արտակարգ իրավիճակների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության աշխատանքային ծավալների ավելացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետ:

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) երեք տարվա հանրային կապերի կամ լրատվական գործունեության բնագավառի ստաժ.
- 3) ռուսերեն լեզվի ազատ տիրապետում.
- 4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1. իրականացնում է նախարարի և այլ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպագրույցների կազմակերպման աշխատանքներ.
2. իրականացնում է լուսաբանման ենթակա միջոցառումները, պատրաստում է պաշտոնական հրապարակումներ, մամուլի հաղորդագրություններ, տեղադրում ԱԻՆ պաշտոնական կայքէջում և տրամադրում ՋԼՄ-ներին.
3. պատրաստում է հրապարակումներ նախարարության գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ.

4. իրականացնում է նախարարության պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի տեղեկատվական սպասարկման աշխատանքներ.
5. ապահովում է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.

5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները

Փորձագետը եռամսյակը մեկ ներկայացնում է հաշվետվություններ, որոնք գնահատվում են ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:

Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքի գնահատման չափանիշները

1. համապատասխան մարմիններից, պաշտոնատար անձանցից և նախարարության ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.
2. լուսաբանման ենթակա միջոցառումների և նյութերի պատրաստում և հրապարակում.
3. տեղեկատվության տրամադրում ԶԼՄ-ներին և նյութերի տեղադրում պաշտոնական ԱԻՆ կայքէջում և ֆեյսբուքյան էջում: